

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպեկով
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ
Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

Պարագրաֆները բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առն օրերէն)
Յայտարարութիւնները ընդունուում են ամեն լեզուով
Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկով
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Հինգշաբթի, ապրիլի 28-ին երաժիշտ

ՄԱԿԱՐ ԵՎ ՄԱԼԵԱՆԻ

մահվան քառասուններն օրը խօսքովանքի եկեղեցում պատարագից յետոյ՝ ժամը 12-ին հողեհանգիստ կը կատարվի հանգուցեալի գերեզմանի վրայ: 1—1

Մերոյ Բաղարան, Սուսամբար Յարութիւնեան Արզումանեաները և Արզուման, Սոսորով Արզումանեաները սրտի խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին՝ առաջինները իրանց անմոռանալի որդու, իսկ վերջիններն իրանց թանկագին եղբոր որդու:

ԱՄԱՏՕՆԻ

(Ներքոյ գիտնականի աշակերտ)

Մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, ամսին 24-ին: Յուզարկաւորութիւնը կը կատարվի աշուր առաւօտեան ժամը 10-ին, իր ընկալարանից, Միքայէլեան փողոց № 153, տուն Բէրի, Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցին, որտեղից կը տարվի խօսքովանքի գերեզմանատունը: 1—1

ԲՈՎԱՆԻՍՏԻՔԻՆ

Քաղաքական տեսութիւն.—Ներքին Տեսութիւն. Հայր Արքեպիսկոպոս Բագրատունու երեսնամեայ գործունէութեան յօդուածը. Շինարար գործաւորները ժողովները Թիֆլիսում: Թատրոն և երաժշտութիւն. Թուրքերի ընդհարումը Սուսամբար. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Պատերազմի շուրջը. Նախկին Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՆ

Անգլիական թագաւոր Էդուարդ VII-ի տեսակցութիւնը Ֆրանսիական հանրապետութեան նախագահի հետ առանձին կերպով ընդգծվեց քաղաքական մասնակցի մէջ: Կարևոր էր ոչ թէ այն, ինչ որ խօսակցութիւնը տեսակցութեան ժամանակ, այլ այն, որ Անգլիան մի տեսակ հրապարակական ցոյց էր անում ամբողջ աշխարհի առջև, յայտնելով իր մտերմական զգացմունքները դէպի Ֆրանսիան:

Այդ ցոյցը քաղաքական անհրաժեշտութիւն էր դարձել: Եւ ահա ինչ պատճառով:

Ինչպէս յիշում են մեր ընթերցողները, մի տարի սրանից առաջ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ կնքվեց մի համաձայնութիւն միջազգային այն խոշոր խնդիրների վերաբերութեամբ, որոնք տարիներ շարունակ բաժանում էին այդ երկու խոշոր եւրոպական պետութիւնների քաղաքագէտներին և պատճառ լինում անախորժ թիւրիմացութիւնների ծագելուն: Թէ Անգլիան և թէ Ֆրանսիան մեծ նշանակութիւն էին տալիս այդ համաձայնութեան, յոյս տածելով, որ գուցէ ժամանակով այդ նախնական համաձայնութիւնը այնքան ամրապնդվի, որ, կապելով երկու առաջնակարգ կուլտուրական ազգերը, կարողանայ իսկապէս ազգային դիրք խաղալ եւրոպական գործերի մէջ:

Եւ յետագայ փաստերը ցոյց տուին, որ Անգլիայի և Ֆրանսիայի մէջ կայացած բարեկամութիւնը կրում է իր մէջ զարգացման կենսունակ սաղմեր: Եղած թիւրիմացութիւնները վերացան: Իսկ երբ մի քանի ամիս յետոյ Անգլիայի և Ռուսաստանի մէջ առաջ եկաւ լարված դրութիւն ծովապետ Բոստամպիսկու նաւերի ընդհարման առիթով Հուլի մօտ, Ֆրանսիան ամեն ջանք գործ դրեց, որ այդ դրութիւնը սուր արտայայտութիւն չը ստանայ և պատերազմի չը փոխարկվի: Ֆրանսիայի պաշտպանութեամբ կարելի եղաւ միջնորդ դատարան կազմել Պարիզում և այնտեղ խաղաղ կերպով քննել Հուլի դէպքը: Դատարանը գահացրեց վիճող և լարված կողմերին և, որ գլխաւորն է՝

աղատեց նրանց պատերազմի արհաւիրքից:

Այժմ, ինչպէս յայտնի է մեր ընթերցողներին, Ֆրանսիայի համար Մարտիկայի առիթով մի անախորժ հարց է ծագել, որոշ շոշափում են Ֆրանսիայի շահերը և նրա միջազգային պատիւը: Գերմանական Վիլհելմ կայսրի խորատ յայտարարութիւնը կարող էր վտանգաւոր հետեւանքների նախնադրեց համարվել, եթէ Ֆրանսիան բոլորին մենակ թողնուած լինէր: Եւ ահա մի այսպիսի ծանր քաղաքական Անգլիան ամբողջ աշխարհի առաջ յայտնում է, որ նա մտերմական զգացմունքներ ունի դէպի Ֆրանսիան և ամենեւին չէ մոռացել այն համաձայնութիւնը, որ նա կայացրել է Ֆրանսիայի հետ:

Ահա այդ հայեցակէտն է, որ տալիս է Էդուարդ թագաւորի այցելութեանը Ֆրանսիական հանրապետութեան նախագահին մի առանձին նշանակութիւն: Այդ դեռ բաւական չէ. անգլիական և Ֆրանսիական նաւատորմերը մտադիր են մի որ և է տեղ հանդիսաւոր հանդիպում ունենալ և ողջունել երկու ազգերի մէջ սկսված և շարունակվող մտնմունքները:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՀԱՅՐ ԱՐՏԱՔԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՅՈՒՆԻՆԵՐԸ

Ապրիլի 24-ին Յովնանեան դպրոցում տօնեցին հայր Արքեպիսկոպոս Բագրատունու և ուսուցչական գործունէութեան յօդուածը, որի կատարման սկզբնապատճառը եղել են նրանք իսկ: Երաւարագէտ սաները: Այդ միտքը իրագործելու համար ընտրված էր մի յանձնաժողով, նախագահութեամբ ինժեներ Ա. Բաբեանի, որը և աշդեցրել էր յիշեալ յօդուածը: Յօդուածի հանդէսից առաջ յօդուածը մատուցեց պատարագ Գլխաւոր եկեղեցում, ուր ձիգ տարիների ընթացքում վարել է և այժմ էլ վարում է քահանայական պաշտօն: Պատարագի իրում ներկայ եղող վարդապետներէ մէկը օրվայ առիթով պատշաճաւոր բարոյ խօսեց, դրուատելով հայր Արքեպիսկոպոսին:

Պատարագից յետոյ ժողովուրդը, առաջնորդութեամբ թեմակալ առաջնորդի և քահանաների, դիմեց Յովնանեան դպրոցը հանդէսը կատարելու, որը և բացվեց դպրոցի աշակերտներին խմբական «Հայր մերով»: Այնուհետև նախ կարդացվեց Վեհափառ Կաթողիկոս օրհնութեան կնիգակը, որը ընդունվեց կնիգներով և ծափահարութեամբ, յետոյ կարդացվեց թեմի առաջնորդի գրութիւնը, որը նոյնպէս շնորհակալութեամբ ընդունվեց: Ապա խօսեցին Թիֆլիսի քաղաքա-

գլուխ Վերմիլիանը՝ Թիֆլիսի հայ համայնքի կողմից և իշխան Միքէլաճէն՝ քաղաքային ուսումնարանական յանձնաժողովի կողմից, որին ենթակայ դպրոցի ուսուցչին է եղել տարիների ընթացքում յօդուածը: Այս շնորհաւորութեանը ծափահարութեամբ ընդունվեցին: Այնուհետև կարդացվեցին միացած ուղերձները, նամակները, ոտանաւորները և հեռագրերները, որոնց թիւը մի քանի տասնեակ էր կազմում: Ամենք իրանց գրուածքներում, գովաբանելով հայր Արքեպիսկոպոսի տարիների եռանդուն, անբեկ և արդիւնաւէտ գործունէութիւնը, ցանկութեւն էին յայտնում դեռ երկար տարիներ տեսնել նրան թէ եկեղեցական և թէ դպրոցական ապարդիւնեւորում: Ընթերցման ընթացքում մէջ ընդ մէջ երգում էր դպրոցի աշակերտներին երգեցիկ խումբը թէ խմբական և թէ սօր երգեր: Հանդէսին ներկայ էր մեծ բազմութիւն: Հանգիստ վերջացաւ ժամը 3-ին հայր Արքեպիսկոպոսի շնորհակալական մի քանի զգացված խօսքերով, որն ընդունվեց ծափահարութիւններով:

Հայր Արքեպիսկոպոս թանգազին ընծաներ և իր մեծադիր իւզաների պատկերը, որը նուիրել էր կոյս Թայրեանը:

ՇԻՆԱՐԱՐ ԳՐԻԳՈՐԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ ԹԻՖԼԻՍԻՄ

Ինչպէս ամբողջ Ռուսաստանում, նոյնպէս և Թիֆլիսում համարեա ամեն օր տեղի են ունենում հազար ու մի տեսակ ժողովներ, խորհրդակցութիւններ, միջնա անգամ գործադուներ: Այն քաղաք, երբ Գահի բարձրութիւնից ամբողջ ազգաբնակչութեանը յայտարարվեց, որ բոլորը կարող են կարծիքներ յայտնել պետական զանազան բարեփոխութիւններ մտցնելու մասին, ամենք էլ սիրտ առած շտապեցին օր առաջ յայտնելու ու հարկէ էր իրանց դարաւոր ցաւերի և պակասութիւնների մասին: Այժմ ամեն մի ազգ, ամեն մի ցեղ, ամեն մի քաղաք, գիւղ ու դաւաճարգ մէկը միւսի ետեւից ժողովներ են գումարում, խորհրդակցութիւններ են կազմում և իրանց կարծիքների ցանկն են կազմում: Ի հարկէ ամենքն էլ մինչև այժմ էլ շատ ու շատ վերքեր ու ցաւեր ունենին, բայց վախճանում էին ամենքն, բացարձակ, ազատ կերպով յայտնելու այդ բոլորի մասին:

Ահա այս բարեխաղող պայմանների շնորհիւ մենք ականատես եղանք շատ ու շատ երեւոյթների, որոնք, ի հարկէ, ունեն իրանց լաւ ու վատ կողմերը: Յիշենք մի քանիսը: Գործադու արեն գործակաւորները, կառավարները, հացագործները, մսագործները, վարսավիրները, էլէկտրաբարձի ծառայողները, խորհրդարաններ ու ծառայողներ և այլն: Սակայն զանվեցին և այնպիսիները, որոնք փոխանակ գործադուրի դիմելու, թղլուութիւն խնդրեցին ժողովվելու և իրանց կարիքների մասին խօսելու: Օրինակ, քաղաքային բանուորների մի մասը, մօտ 70 հոգի, ժողովվեցին և իրանց անյատաճելի կարիքները յայտնեցին, իսկ ամսին 22-ից քաղաքային տան դահլիճում տեղի են ունենում շինարար գործաւորների, այսինքն, որմնադիրների, քարտաշների, հիւսնների և առաւելագործների և, վերջապէս, ներկարարների ժողովները:

Ներկայ գտնվելով վերջին ժողովներից երկուսին, ես ցանկանում եմ մի ամփոփ գաղափար առն ընթերցող հասարակութեանը այս չարքազ կեանք վարող գործաւորների կարիքների և ցանկութիւնների մասին, որոնց ամսին խօսեցին յիշեալ նիստերում:

Ամեն մի ժողովին ներկայ էին 700—1000 հոգի, բոլորն էլ շինարար գործաւորներ: Օրինակ, իրանց կարգապահութիւն էր տիրում: Ամենքը ուղարկութեամբ հետևում էին հարցերի ընթացիկին և ճառախօսներին: Նախագահը, նրա օգնականները բոլորն էլ գործաւորներ էին, սակայն այնպէս փորձառութեամբ էին տանում գործը, որ շատ խնդիրներին ժողովներ կարող էին օրինակ վերցնել նրանց

կարգապահութիւնից և լրջութիւնից: Ժողովներին ներկայ էին զանազան ազգութիւնների պատկանող անձեր, վրացիներ, հայեր, թուրքեր և ասորիներ: Նկատելի էր ողուս գործաւորների բացակայութիւնը, թէև Թիֆլիսում նրանք բաւականաչափ են:

Ընթերցողներին ծանօթոյթ չը պատճառելու համար ես առաջ կը բերեմ քարտաշների և որմնադիրների միաձայն կայացրած որոշումները, այսքանը միայն աւելացնելով, որ հիւսնների ու առաւելագործների որոշումները գլխաւորապէս նոյնանման են:

1) Աշխատել օրական 8 ժամ: Ամառը առաւօտեան 7-ից մինչև երեկոյեան 5-ը, ձմեռը 8-ից մինչև 5-ը: Ամառը 2 ժամ հանգիստ, մի ժամ ճաշի և մի ժամ նախաճաշի համար, իսկ ձմեռը միայն 1 ժամ ճաշի:

2) Աշխատանքները կապալով տալու սովորութիւնները ոչնչացնել. կորչին կապալառուները—հարստահարիչները: Ոչ մի գործաւոր իրաւունք չունիայ կապալով գործ վերցնելու:

3) Հիմնել մի ընդհանուր բիւրօ, որտեղ պէտք է դիմեն գործաւորները աշխատանք ստանալու համար, իսկ շինութիւն անողները վարձին իրանց հարկաւոր գործաւորներին առանց որ և է միջնորդի: Բիւրօն պիտի հակէ գործաւորների բարեխաղութեան վրա և քննէ ու որոշէ բոլոր տարաձայնութիւնները, որոնք կարող են ծագել գործաւորների և տան շինողների մէջ:

4) Ոչնչացնել ուսումնառութիւնը, արհեստաւորների աւագի և արհեստաւորների վարչութիւնը: Ընտրել մի վերաստուգիչ մասնաժողով նրանց անցեալ գործունէութեան քննութեան համար:

5) Պարտադիր և ձրի ուսումը բոլոր գործաւորների երեխաների համար մինչև 16 տարեկան հասակը, առանց ազգութեան և սեռի խտրութեան և անպատճառ մայրենի լեզուով պետական տարրական դպրոցներում:

6) Ամեն վարպետ իրաւունք ունի պահելու մի աշակերտ, 16 տարեկանից ոչ շահել, այն էլ վարձով, երեք տարուց ոչ աւելի: Ընդունակ աշակերտները կարող են վարպետի առտիճան ստանալ 2 տարի ծառայելուց յետոյ, անհրաժեշտ քննութիւն տալով բիւրօին կից վարպետներից բաղկացած մասնաժողովում:

7) Ժողովների, խօսքի ու գործադուների ազատութիւն:

8) Պետական ապահովութիւն բոլոր գործաւորների մահվան, ծերութեան և անդամաւորութեան դէպքերի համար:

9) Բանուորների վարձը բաժանվի աշխատանքի օրը աշխատանքի տեղում և ժամերին, այն է ցերեկվայ ժամը 2-ից վաղ:

10) Տօն և կիրակի օրերը աշխատանքը դադարեցնել ցերեկվայ 2-ին:

11) Գործաւորները վարձ ստանան և չաշխատած՝ զէպցում, եթէ միջերեքի պակասութեան պատճառով, մի խօսքով տան տիրոջ մեղաւորութեամբ անկարելի է եղել աշխատել: Իսկ եթէ գործաւորը ինքնակամ, առանց նախադրուած ցանցի ու հեռանալ գործից, այն ժամանակ տուգանքի ենթարկվի:

12) Աշակերտները պիտի կատարեն միայն իրանց արհեստին վերաբերող պարտականութիւնները, միանգամայն ազատ պիտի լինեն անայլ գործերից—վարպետի համար ծառայելուց:

13) Աշխատանքի, օրավարձի գինը որոշելու համար, ունենալ մի առանձին գրասենեակ, բիւրօյին կից:

14) Այժման օրավարձը աւելացնել 500/0-ով: Բացի վարչիւններից ժողովում անցան և ուրիշ հարցեր, սակայն նրանք մասնաւոր բնաւորութիւն ունեն և պարզաբանում են այս կան այն որոշումը: Մի կողմ թողնելով այն հարցը, թէ իրական կեանքում որքան իրագործել են այս որոշումները, կասենք, որ այսպիսով մեր հասարակութեան առաջ մեր «մոռացված եղբայրների» կողմից էլ զբղւած են որոշ կարիքներ և պահանջներ, որոնց բաւարարութիւն տալով շահված կը լինեն թէ գոր-

ծառայողները և թէ ազգաբնակիչները: Հասարակութիւնը պարտական է առանձին ուղի դարձնել իր բազմաթիւ մասերը կազմող ամեն մի դասակարգի կարիքներին, որովհետեւ ամբողջի գոյութիւնը այդ մասերի բարեկեցիկ գրուածութիւնից է կախած:

8. Չախմակապետան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Մանկական ցերեկոյթ.—Կոնցերտ.—Եւրոպական հերկայայտումներ)

I

Չախմակ ցերեկոյթի օգոստոսի իշխանութիւնը Մ. Թումանյանին և տիկ. Մարգարէտիանին առաջ ցերեկոյթը ունեցել է 230 բուրլի գուտարդիւնը: Առաջիկայ շաբաթ օրը, ապրիլի 30-ին, նոյն ցերեկոյթը կրկնվելու է Հաւաքաւում, Արաքսեանի թատրոնում: Կարելի է յուսալ, որ Հաւաքաւորի հայ ծնողները կը շտապեն տանել իրանց մանկիկներին գոնէ մի անգամ մարդկային մանկական գուարճութիւն տեսնելու, մանկան նման գուարթ քրքրելու:

Ինչպէս յիշում են մեր ընթերցողները, այսօր լինելու է Բարսիլոնայի կոնցերտը, որը կազմած է հետաքրքիր երաժշտական կտորներէ:

II

Դերասանուհի Եւրոպական խումբը շաբաթ օր, ապրիլի 23-ին, հերկայայտեց Ստրինդերգի «Հայր» ողբերգութիւնը երեք գործողութեամբ:

Պիեսը ունի ուժեղ, խիստ ազդեցութիւն գործող տեղեր և հանդէս է բերում յամառ ու չը բեկվող ընտանոթութիւնների մի ճակատագրական ընդհարում: Բայց նա սպաւորութիւն է գործում աւելի իր չափազանց ծանր և ջրեր քայքայող տեսարաններով, քան ներքին հոգեբանական էություններով, քան ներքին հոգեբանական էություններով: Պիեսի մէջ մի կենսաբանական հարց է դրված թէ՛ մի ծնողներից աւելի մեծ իրաւունք ունի իր որդիներին կրթութեան վրա, հայրը թէ՛ մայրը: Ան այդ հարցի շուրջը կատարվող վեճերը առաջացնում են ամուսինների մէջ ընդհարումներ, որոնք ստանում են ծայրայեղ ընտանոթութիւն:

Պիեսի գլխաւոր հերոսի, քաղաքացիական գրող կատարում էր Գրեկը, որ մեծ տաղանդով ներկայացրեց նրան, հանդէս բերելով քաղաքացիական անձնաւորութեան մէջ կատարվող յուզմունքները սկզբից, երբ նա ուժեղ անձնաւորութիւն էր, մինչև վերջին քայքայիցը, երբ նա ենթարկվում է խանութութեան, կասկածի և երկնքի ազդեցութեանը:

Եւրոպական, որ կատարում էր նրա կնոջ Լաուրայի դերը, ներկայացրեց սառն և վերաւորված ամբերկրուն մի տիպ, որ նոյնքան յամառ է, որքան իր ամուսինը, բայց աւելի թունաւոր միջոցներով է գործում, նպատակ դնելով իր կենսաբանական ասպարէզից լիտ մղել իր քան խանգարող մարդուն: Վատ չէր Լիլիցիւն վա փոքրիկ աղջկայ, Բերտայի դերում:

Հետեւեալ օրը, կիրակի, ապրիլի 24-ին, Եւրոպական գուրու եկաւ «Մադամ Սանթին» պիեսում: Նրան այդ գերում տեսել ենք նախկին տարիներում: Այս անգամ Եւրոպական նորից առիթ տուեց համալրելու, որ նա Իւր-2-ին բերի առաջնակարգ կատարողներից մէկն է:

Երեկ կրկնվեց իշխան Բարսեաւոյնական «Перекаты» պիեսը:

Սերող

ԹՈՒՐԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՄԸ ՍՈՒՍՏՈՒՄ

(Նամակ Զահուկ գիւղից)

Անանկալ և սիրտ ձկնող ընդհարումն տեղի ունեցաւ Հին-Նախնիկներից մօտ 18 վերստ դէպի հիւսիս-արեւմուտք գտնվող Թուրքաբնակ Սուստ գիւղում: Պատճառը երկու թշնամական կուսակցութիւններն են եղել, որոնցից ուժեղը կոչվում է «Բէդան ուշադի», իսկ մեղքը թոյլը—«Հաշի-Ալի»:

Այս թէ ինչ են պատմում սուստեցի թուրքերի այդ կռիւ մասին:

Անցեալ աշնան մի ինչ-որ պատճառով «Հաշի-Ալի» կուսակցութիւնից մի թուրք սպանում է հակառակ կուսակցութեանը պատկանող Բերբալայ-Ջաբալի Մուլա-Ֆաթալի-օղլի մի թուրքի, որը այդ գիւղի Մուլա-Իսմայիլի եղբայրն է եղել: Այդ օրվանից այդ երկու կուսակցութեան յարաբերութիւնները խիստ լարվում են և գիւղի անդորրութիւնը կասկած է լինում համարեա թէ մի խիստ ձգված թիկից, որ մօտ է կտրվելու:

Սաղաղութեան խախտման պատճառը լինում է հետեւեալ դէպքը. սուստեցի իրանց

մէջ հանգանակութիւն են կազմում նուիրատուութիւն հաւաքելու նոր մղելի կառուցանելու համար, «Հաշի-Ալի» կուսակցութիւնից այդ գործին գլուխ է անցնում Իսկանդար անունով մի թուրք, որի եղբայրն էր անցեալ աշնան սպանել Մուլա-Իսմայիլի եղբորը: Գիւղի հին մղելիքում Մուլա-Իսմայիլը երկու ինջուցի (նշուալ Սուստին հարեան թուրքաբնակ գիւղ է) սէրներին հետ աղօթելու տեսնում է Իսկանդարին, որ ներս է մտնում մղելիքի նոյնպէս աղօթելու:

Մուլան անմիջապէս յարձակվում է Իսկանդարի վրա: «Ո՛վ է քեզ վէճիլ ընտրել նուիրատուութիւններ հաւաքելու մղելի կառուցանելու համար, պոռում է մօլլան, մինք ունենք մարդ, որը առանց քեզ էլ կարող է այդ գործը կատարել», և սկսում է Իսկանդարին փայտով ծնծել, իսկ վերջինս նոյն եղանակով պատասխանում է մօլլային իր ձեռքի մօրակով: Մուլային իր գործում օգնում են ներկայ եղող երկու սէրները:

Այդ խորհրդաւոր դէպքից յետոյ, որը Սուստի ընդհարման նախաբանն է եղել, Մուլա-Իսմայիլը, կատաղի զգացմունքի ազդեցութեան տակ, ներս է խուժում բուն թափով «Հաշի-Ալի» տունը, որպէս հակառակ կուսակցութեան պարզվելի, ձեռքը մեկնում է դէպի նրա մօրուքը և կատաղի թափով փետում է մազերի մի ստուար փունջ: Այդտեղից սկսվում է կատաղի ընդհարումը երկու հակառակ կուսակցութեան մէջ, որը տևում է երկու օր ընդմիջութիւններով, անցեալ ամսի 14—15-ին: Այդ կռիւ մէջ մասնակցում է ամբողջ գիւղը, թէ՛ այր և թէ՛ կին:

Կռիւ ժամանակ ուժեղ կուսակցութիւնից զնդակահար է լինում և մեռնում մի թուրք: «Հաշի-Ալի» կուսակցութեան մարդիկ, նախա-տեսնելով իրանց կենսաբանական ասպարէզի վտանգը, շտապում են ժամ առաջ պատասպարվել Իսկանդարի բարձր և ամուր պարիսպներ ունեցող բակում, որը իսկոյն շրջապատվում է, որպէս գերի ընկնող բանակ, և սկսում է կատաղի հրաձգութիւն: Կանանց, երեսներին լացն ու աղաղակը, վայնասունը և աղմուկը, խանգարող հրացանների պայթիւնների հետ, վերջնական խաւարի մէջ առնում են խանգարչիթ, դժոխային մի տեսարան: Պաշարվողների կողմից մահացու վէրք է ստանում մի տղամարդ և թէթէ վերաւորվում են երկու կին: Կռիւն գիւղի մի կիսին դադարում է (մարտի 14 լոյս 15-ին):

Միւս օրը երեկոյան պահուն նորից է ըսկանում կատաղի կռիւ: Թոյլ կուսակցութիւնը այս անգամ պատասպարվում է Նաղի անունով մի թուրքի տանը և սրահի մէջ, պահպաններ կանգնեցնելով բակի դրան առաջ: «Բէթան ուշադի» կուսակցութեան մարդիկ՝ սաստիկ գրգռված շրջապատում են Նաղու տունը այս անգամ բոլորովին մորթնում և սրահը անդուլ անելու նպատակով: Ուսանք սկսում են տան երկրիներից առաջին քարը նետել ներս, ուսանք էլ պատրաստվում են կրակ տալ տունը և այնտեղ պաշարված իրանց եղբայրներին այրել: Վերջիններս իրանց մահվան տագնապի քայքային մի կերպով մարդիկ են ուղարկում Զահուկ գիւղը, որ Սուստից 8 վերստ հեռու է գտնվում, այնտեղի թուրքերին հաւար տալու, օգնութեան հասնելու համար: Գիւղի մի կիսին Զահուկից հարեւաւոր թուրքեր վրա են հասնում Սուստ գիւղը և խաղաղութիւնը վերականգնում մի կերպով: Եթէ այդ շտապփոյթ օգնութիւնը չը լինէր Զահուկի թուրքերի կողմից, պաշարվածները ընաշինջ կը լինէին անդուլ:

Միւս առաւօտ «Հաշի-Ալի» կուսակցութեան բոլոր մարդիկ, ընդամենը 12 տուն, գաղթում են գիւղից, վեր առնելով իրանց հետ ամեն մէկը մի վերնակ կամ մահաճակ միայն, իսկ մնացած գոյերը կամ անասունները գրավեցին և թաւան ենթարկվեցին միւս կուսակցութեան կողմից:

Գրաւված է 180 գլուխ ոչխար, բացի միւս անասուններից, հրեհված է մէկ տուն, երեքի էլ առաստաղն է քանդված: Ընդհանուր ֆաւար հանուկ է 7—8 հազար բուրլոյ:

Այժմ իշխանութիւնը կալանաւորել է, որպէս ամուսն են, երկու կուսակցութիւններից է 10 թուրք, երկու էլ բուրլոյ, վերջիններս, որպէս կողմնակի թաւան անողներ: Գործը յանձնված է քննչին:

Գաղթող ընտանիքներից 7 գտնվում են Նախնիկանում, 4—Զահուկ, 1—Դիլիվարում: Զահուկում մահացու վէրք ստացող թուրքը մեռաւ հէնց գաղթած օրը:

Գ—ունի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղը, ապրիլի 26-ին, երեկոյան ժամը 7-ին Թիֆլիսում, Արախտական ընկերութեան շինութեան մեծ դահլիճում կայանալու է ծնողական մի մեծ ժողով: Մասնակցել կարող են ծնողները տոմսով: Տեղերը համարով են: Տոմսակներ կարելի է ստանալ իշխանուհի Մ. Թումանյանից, իշխան Ա. Մ. Արդուլեանից և ուրիշներից: Ժողովի զբաղման առարկաները լինելու են մի շարք հարցեր թէ՛ դպրոցական ներկայ խառն հանգամանքների վերաբերմամբ և թէ՛ առհասարակ կրթութեան մասին:

Ստացանք 1) պ. Իւրի Վեսելովսկուց նրա «Армянский поэт Смбаг Шахъ Азизъ» աշխատութեան երկրորդ հրատարակութիւնը, որ աղված է Մոսկվայում: Գրքի մէջ կան և պատկերներ, գործ նկարիչ պ. Վ. Սուրբ-նեանցի: 2) Յակոբ քան. Սարիկեանի թարգմանած հետեւեալ երկու գրքերը. 1) Դիմիտրի-վա—Ներսիս ամենքը ճանաչում են», պատմվածք, 24 փոքրադիւր երես, գինը 5 կ. և 2) Վ. Լուսինիլի—«Կապիկներ», պատկերազարդ, 52 միակ մեծութեան երես, գինը 15 կ.: Երկու գրքերը կանգնեցնելու էլ աղված են Թիֆլիսում, Հերմէս տպարանում:

Մեզ խնդրում են տպել հետեւեալը. «Ամենքը գիտեն, որ քանի օր է անդադար անձրև է գալիս համարեն գիւղեր ու ցերեկ,—որքան շատ, այնքան աւելի լաւ են մաքրվում քաղաքի կենսաբանական յայտնի փողոցների սաղաթակները, բայց մի և նոյն ժամանակ նրա հեռաւոր թաղերի փողոցներից շատերը անանցանելի են լնացած ջրերի և մանաւանդ մինչև մարդու ծնկները ծածկելու չափ տեղացած ցեխերի պատճառով, այնպէս որ անցնող դահլիճ անելը, հաստատ կարելի է ասել, անհնարին է թէ ոտով և թէ սայլերով գնացողների համար: 2ր խօսելով միւս բազմաթիւ փողոցների մասին, այսքանը կասեմ միայն, որ եթէ բաշտութիւն ունենայ քաղաքի խնամակալներից մէկն ու մէկը այսպիսի օրերում գէթ մի անգամ բարձրանալ դէպի վեր կամ վերջից դէպի ցած ի՞նչ այսպէս անուանված «Почтовая уличка»-ով, որ գտնվում է Հաւաքաւորում, այն ժամանակ քաղաքի վարչութիւնը կը հասկանայ, թէ իր հոգացողութեան յանձնված քաղաքի հեռաւոր մասերը ի՞նչ դրութեան են: Ես չեմ կարծում որ յետ ընկած գիւղերում անգամ այսպիսի փողոցների հանդիպելու մարդ: Ի՞նչ կը նշանակի մի քանի փողոցների վրա տարին տասնեակու ամիս միշտ ծախս անել, իսկ այսպիսի տեղերը անխնամ թողնել, որ համեմատած միւս փողոցների ծախսերին—չնչին ծախսով կարելի է մաքրել և քարել տալ: Բայց ո՞վ է անողը, մի՞թէ այս փողոցների ընակիչները քաղաքի ծախսերին անմասն են?»:

«Հաւաքաւոր ս. Կարապետ եկեղեցու շրջա-կայքում, 11—13 օրվայ ընթացքում, պարբերաբար տեղացող անձրևների պատճառով փրկեցին մի քանի անձրև և պարիսպներ: Այդ պատճառներից աւելի սրտաճմլիկ էր կիրակին, ապրիլի 24-ին ցերեկվայ ժամը 2-ին Գրեմսկի պերեուկովում, Սօֆիա Տէր-Գալուստեանցի տան քանդված պարիսպի հետեւանքը: Նահատակվեց թագուհի Սոֆիա—8 տարեկան աղջիկ և թեթէ վերաւորվեց բէալական դպրոցի I դասատան աղակերտ Սարգիս Մանուկեանցը, որոնք անցնում էին այդ տեղով»:

Վոյսկ քաղաքի ընակիչներին այս օրերս, տառա «Прох. Кр.» լրագրերը, ցրել էին «Թերթիկներ», որոնք կոչ էին անում «Կոտորեցէր ուսանողներին»: Այդ թերթիկները տա-րածվել էին քաղաքի այն թաղերում, որ ընակվում է խուլիգան կամ սրկիայ կոչված ազգաբնակիչները, որը պատրաստ է ամեն քայլ օգտվել ամեն տեսակ անկարգութիւններից սրկիայութիւններ առաջ բերելու:

1905 թւի ապրիլի 10-ին ներքին գործերի մինիստրին տրված Բարեբաղոյն մի ուղարկում է իրաւունքի միջին գիւղացիական հակաբանութիւններ պատահած գաւառներում ժամանակաւոր յատուկ յանձնաժողովներ, որոնք պէտք է պարզեն, թէ ո՞վքեր են մասնակցի գիւղացիական յանցաւոր ժողովներում: Այդ յանձնաժողովների պարտաւորութիւնն էր պէտք մէկն էլ լինելու է հաշուել, թէ որքան և ի՞նչ արժէքի ֆաւանք են հասցրել այդ գիւ-

ղացիական անկարգութիւնները: «Вірж. Вѣд.» լրագրերը ցրել է, որ ներկայումս այդ ուղարկ III կէտի հիման վրա ներքին գործերի մինիստրութիւնը մշակել և ուղարկել է նահանգապետներին յատուկ հրահանգներ այդ առիթով: Հողային բաժնի կառավարչի օգնական Լիւս-ֆուրը մինիստրութեան կողմից ուղարկվում է, որ տեղի վրա մանրամասն ցուցմունքներ անէ և ղեկավարէ այդ յանձնաժողովները աշխատանքները:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Այսօր քաղաքիս բոլոր հացագործների մօտ ծառայող բանաւորները գործադուլ արին: Ոչ մի տեղ հաց չէր ձարվում: Բանաւորները պահանջում են ուժեղները տեղացումը մի որոշ տոկոսով, կիրակի օրվայ հանգստութիւն, ընելու մաքուր սեւեռակ գործարանատիրոջ հաշուով և այլն: Ներկայումս քաղաքում թանգութիւն է տիրում. տաւարի միւս ծախվում է 10 կ., ոչխարինը 13 կ., հաց ամենին չը կայ (չին թխում), իւղը 40 կ., ձուր 3 հատը 5 կօպէկ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՈՒՐԱԶ

Անրոգ դուքիւն: Ոչինչ որոշ բան յայտնի չէ Զինական ծովում գտնվող ուսական նաւատորմի վերաբերմամբ: «Morning Post» լրագրի հապօճական թղթակիցը ենթադրում է, որ ուսական նաւատորմը բաժանվել է. նրա մէկ մասը գտնվում է Դալան կղզու մօտ, իսկ միւս մասը Իայէտ նաւահանգստի մօտ: Ռուսական նաւատորմի այժմեան կազմի մէջ նաւերի քանակութիւնը 60-ից անցնում է, որովհետեւ նրա հետ միացել են Զինական ծովի զանազան կէտերում սպասող անխառն և փոխադրանաւերը:

Բացի դրանից, ուսանելու իւր թէ առնում են Դանգաւորում քանի նաւեր խուղարկու ծառայութեան համար:

Տեղեկութիւնների բացակայութիւնը ծովապետ Նէբոգատովի էսկադրայի մասին, նոյն թղթակցի կարծիքով, բացատրվում է թանձր մառախուղներով, որի պատճառով էսկադրան կարող էր անհետաւել կերպով անցնել: (Русь) Ռուսական պատերազմի Ամերիկայում: Զի-կագոի «Daily News» լրագրի Վիէնայի թղթ-թակիցը հաղորդում է, որ ապրիլի 22-ին Պետերբուրգ կը գայ յայտնի ամերիկական «պողպատեայ մագնատ» Չարլզ Շվաբը և ոչ պակաս յայտնի Նիւ-հորիսան «Ինիցիատոր» Չարլզ Ֆլինտը՝ պայմանագրի կապելու առաջաց կառավարութեան հետ գէնք, ուղարկվողները և պատերազմական նաւեր հայթայթելու համար: Պատէրի ընդհանուր գումարը հասնում է 100 միլիոն դոլարի: Մի քանի շաբաթ է արդէն, որ բանակցութիւնները կատարվում էին մեծ գաղտնապահութեամբ: Այդ պատէրը, շուտափոյթ կատարելու համար, կը բաժանվի ամերիկական մի քանի գործառնների մէջ. Շվաբը անձամբ կը հսկէ պատէրի կատարման վրա, իսկ Ֆլինտը յանձն կառնէ գործի ֆինանսական կողմը: Այդ ահագին պատէրի տալը ամերիկացիներին ձեռքը, անկասկած, մեծ դժգոհութիւն և հիասթափութիւն կառաջացնէ Ամերիկայում: (Русь)

Իժդոհները Նապոլիում: Տօկիօից «Times» լրագրի հեռագրում են, որ նախկին մինիստր Լիւս Օկուս հրապարակական ձառի մէջ աշխարհային դժգոհութիւնը յայտնեց հապօնական դիպլոմատիայի անաւոյ գործունէութեան առիթով: Նրա կարծիքով, հապօնական դիպլոմատիան կարող էր բալթիական էսկադրայի թաղող ուղիւնստը գալու առաջն անգամը: (Ноб.)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հայ յիդափոխականների առաջնորդ Ան-դրանիկը, որ այժմ գտնվում է Շվեյցարիայում, յայտնի է «Berliner Local-Anzeiger» լրագրի թղթակցին, որ հայ յիդափոխական կուսակցութիւնը (Դաշնակցութիւնը) որոշել է այն ձևով գործել, որ մեծ պիտութիւնները ստիպված լինեն միջամտել թիւրքական գործերում:

—Ամերիկական կառավարութիւնը սահմանա-դրութիւն է տուել Տրանսվանիայի նախկին հանրապետութեանը: Ամեն ինչ այդ սահմանադրութեան մէջ լաւ է և արդարացի, միայն նա իրաւունք չէ տալիս երկրի պարլամենտին փոփոխելու բուզճեալը: Բայց եթէ այդ պարլամենտն իրաւունք չունի փոփոխելու բուզճեալը, կը նշանակէ նա գործնական կենսութեան նշանակութիւն չի ունենայ, ասում է «НОВОСТА» լրագրերը: Երանի թէ «Հայտ ուրիշները գոնէ այդքան էլ ունենան», կաւեղացնեն մենք:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

23 ապրիլի

ԼՕՆԴՈՆ: «Standard»-ը ասում է, որ «Լիթ-դի» գործակալութիւնը հարց է տրված, թէ արդեօք իրենց ապահովագրական վճար կը տրվի, եթէ բալթիկական էսկադրայի 6 կամ 9 փոխադրանակները ոչ մէկը չը հասնի Վլադի-վոստոկ: Ենթադրում են, որ յիշված գումարը կը կազմէ նաւերի արժէքի 40% ը:

ՎՐՈՐՆԵԺ: Նահանգական զինուորին, խօշ-րայի դէմ կուեղու նպատակով, շինել է տալի 24 ժամանակաւոր բարակներ և 43 առողջա-պահիկ կէտեր նահանգին էսկադրայի վայրերում: ՆԻԻ. ԵՐԿ: Վաշինգտոնում արտասանած մի ճառով բարոն Կանէկոն ասաց. «Եսպանացի-ները համաձայն չեն լինի, որ Ամերիկան թողնէ Ֆիլիպինյան կղզիները: Պատերազմը վերջանալուց յետոյ Եսպանիան դաշն կը կապէ Ամերիկայի հետ անտեսական հիմքերով: Մեր փոխադարձ յարաբերութիւններն արդէն պարզ են. Ասիան մեր ձեռքում կը լինի: Դա կը հաստատէ Զինատանում բաց դռների քաղա-քականութիւնը և կարգիւ է նրա բաժանումը: Եսպանացիները սրապէս ընդունելութիւն են ցոյց տալիս ամերիկական նաւատորմին, ուրովհետև նրա զբօսայգի հանդիսանում է անգլո-սաքսոն բաղադրվածութեան ներկայացուցիչ: Ժառը մեծ ոգևորութիւն առաջ բերեց:

ԲՈՒԿԱՊԷՏԵ: Տիսսան Պոպպային ուղար-կեց իր վիաներին մանամարտի հրաւերելու: Պոպպային էլ ընտրեց իր վիաներին:

ԿԱՐԼՍՐՈՒԿ: Կայսրը ժամանեց այստեղ:

ՊԱՐԻԶ: «Figaro»-ն հաղորդում է, որ Դէ-կասէն, Րուվիէի հետ ունեցած տարաձայնու-թեան պատճառով, հրաժարական կը տայ մին-չև պարլամենտի վերաբացումը, որ նշանակված է մայիսի 2-ին: Նրան յաջորդ նշանակվելու է արտաքին գործերի մինիստրութեան մէ բարձր պաշտօնաւոր:—«Petit Parisien»-ը հրատարա-կեց մի հեռագիր Բուզազէյից, որն ասում է, թէ Յրանց-Յովսէփ կայսրը գահից հրաժար-վելու է 17 տարեկան էրցհերցոգ Կարլի օգտին:

ԱՆԷՔՍԱՆԴՐՈՒՆ: Մայիսի 28-ին լըզելվը կը մեկնի Եւրօպա և կայցիւ է Անգլիա, ուր ներկայ կը լինի պրինցէսսա Մարգարիտա Կոն-նաուտի պաակադրութեանը շէֆական պրինց Գուստավ Ալֆրէդի հետ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գեներալ-Նահանգապետ ան-ձամբ Նոցա Մեծութիւններին մատուցեց Պե-տերբուրգի ընտկիներին անհնազատակ շնոր-հաւորութիւնները Նորին Մեծութեան թա-գուհին Կայսրուհի Ալեքսանդրա Յեօդօրօվայի անուանակոչութեան առիթով: Նոցա Մեծու-թիւնները Բարձրագոյն բարեհաճեցին շնոր-հակալութիւն յայտնել քաղաքի շնորհաւորու-թիւններին և բարեմաղթութիւններին համար:

ՄՕՍԿՎԱ, 22 ապրիլի: Օրեխօվոն ալիւ-ցին 33 շէնքեր: Վնասը 1/2 միլիօնից ասելի է: ԻրԳԱ, 22 ապրիլի: Լուծիքական եկեղեցու պատուրի դրան առկէ հրապարակում հա-ւարդից մի ամբողջ, բաղկացած այլադի պրա-ւօւլանտիներէ և ցուցական ձևով պահանջեց միանալ բողոքական եկեղեցուն: Պատուրը յետաձգեց այդ պահանջը, ասելով, որ անհրա-ժեշտ է ամեն մէկին ընելու, թէ որքան տե-ղեակ են հաւատի գործերում:

ՕԴԵՍՍԱ, 22 ապրիլի: Հացթուխներին և նրանց բանւորներին պատգամաւորները համա-ձայնութեան չեն գալիս: Հացի պակասութեան պատճառով գները բարձրացան:

ԲԱՒՈՒ, 22 ապրիլի: Սկսվեց ծառաների գործադուլ: Գործադուլ են արել Բագուէի և Բալայրիկի կայարաններում էլ:

ԿՕՎԱ, 23 ապրիլի: Լուցկու երկու գոր-ծարաններում բանւորները գործադուլ արին:

ՏԱՆԺԻ: Շուտով սպանական միստիան Ֆեյց կուղևորվի:

Կ. ՊՕԼԻՍ, 23 ապրիլի: Սաքսոնական թա-ղափառանգը, Թիւրքայում երկար ժամանակ մնալով, այսօր մեկնեց:

24 ապրիլի

ԵՐԵՎԱՆ, 23 ապրիլի: Սկսվեց ծառաների գործադուլ:

ԿՐԵՄԵՆՉՈՒԳ, 23 ապրիլի: Կրկնօլօ ա-րուարձանում ծագեցին հակահրէական ան-կարգութիւններ, որ իր ժամանակին ձեռք առնված միջոցներով զսպվեցին:

ԲԵԼՕՍՏՕԿ, 23 ապրիլի: Պատրաստի դիպու-տներ մաղադկները և դերձակներ արհեստա-նոցներն արձակեցին բանւորներին, անհնար համարելով ներկայ պայմաններում բաց պա-հել իրանց արհեստանոցները: Նոյն ձևով կար-գադրեցին և հացագործարանները տեղերը:

ՍԵՎԱՍՏՕՊՈԼ, 23 ապրիլի: Վերսկայից կա-

նօնաւոր նաւազնացութիւն Օդեսայի և Նորմի-ափերի միջև: Նաւերի կոմանդա ղեկ ղինու-րականներ են:

ԲԱՒՈՒ. ԵՆԵՉԵՆՍԿ: Բաղաւր հանգիստ է: Տեղական երկու լրագիրները ժամանակաւորա-պէս դադարի են:

ՏՕԿԻՕ, 23 ապրիլի: Լուր է պտտում, որ ռուսական չորս անհանաւ յարձակվեցին ես-պօնական մի առաքատանուէր վրա ապրիլի 22-ին Նոկկաիօի մօտ: Ականանաւերը կրակ արին նաւի վրա և, երբ նա սկսեց այրվել, նրանք դիմեցին դէպի հիւսիս:

ՊԱՐԻԶ, 23 ապրիլի: Բաղաւրական շրջան-ները պնդում են, որ Անգլիայի հասցրած օգ-նութիւնը արաքներն ոչ թէ Ռուսաստանի դէմ է, այլ Գերմանիայի Ասիա մանելու դէմ:

Կ. ՊՕԼԻՍ, 23 ապրիլի: Այստեղից տրված հեռագրական լուրը Եմէնի թիւրք գործերի մէջ ծագած խառնակութիւնների մասին՝ հա-ւրովի է:

ՊԱՐԻԶ: «Matin»-ը կարծիք է յայտնում, որ Բոժէստվէնսկու նաւատորմի տեղը կամըով է թաղցված, որպէս զի բարդութիւններ ա-ռաջ գան: Ռուս ծովապետը ենթադրում է, որ Ֆրանսիական շրբերում ինքը բոլորովին ազատ է: Մովսէս Ժօնիկիւրը կը կարգաւորէ այդ գործը, և «Figaro» լրագիրը պատում է, որ Դէկասէն, Րուվիէի հետ անհամաձայնու-թիւն ունենալու պատճառով, կը փոխարինվի մի իսկական զեպլաւատով: Դէկասէն իբր ժառանգ անուանում են Մադրիդի Ֆրանսիա-կան դեսպան Կամբոնին:

24 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պաշտօնական տեղեկութիւն-ներ չեն ստացված Հեռաւոր Արևելքից ապրի-լի 23-ին: Ապրիլի 23-ին Թագուհի Կայսրու-հի Ալեքսանդրա Ֆեօդօրօվայի անուանակո-չութեան օրը ցարսկօսելեան Մեծ պալատի տաճարում Բարձրագոյն ներկայութեամբ պա-տարադ մատուցվեց:

ԼՕՁ: Տեղական «Гонецъ Подъезжий» լրա-գիրը հաղորդում է, որ չար լեզուները սուտ լուրեր են տարածում, որ իբր թէ հակառա-կութիւն կայ լեհական և հրէական ազգաբնա-կութեան միջև, որ հրէաները պղծում են լե-հական եկեղեցիները: Այդ լուրերը զուրկ են հիմքից: Յարաբերութիւնները լեհերի և հրէա-նեքի միջև բաւական լաւ են, և լուրեր տա-րածողներին չի աղովիլ գործը շարժեր հասց-նել:

ԳՈՒԼԵՉԻՆԻՆ, 23 ապրիլի: Լուրերի հա-մեմատ, եսպանացիները շարժում սկսեցին մեր ալ թիւի դէմ: Յինցղատուհի մօտ իբր թէ տեղի է ունեցել ընդհարում:

ՊԱՐԻԶ: Պաշտօնական յանձնարարութեամբ Նիւ-Եորկում գտնվող եսպանացի Կանէկօ խոր-հուրդ էր տալիս Միացեալ-Նահանգներին քա-րողի ամբողջ Ասիայում ամէրիկական և անգլ-լո-սաքսոնական զաղափարները, նոյնպէս և կառուցանել անագին նաւատորմ բաց դռների սկզբունքը պաշտպանելու և Զինատանի ան-դամահատութեան առաջն առնելու համար:

ԼՕՆԴՈՆ: Հաստատում են, որ բանակ-ցութիւնները Յրանսիայի և Անգլիայի ար-տաքին գործերի մինիստրների միջև Ֆրանս-սիական կօլոնիայի ապագայի վերաբեր-մամբ Հնդկա-Զինատանում արդէն ըս-կայեցին: Յրանսիական արտաքին գործերի մինիստրութեան մէջ երկու կը կրում, որ եսպանացիները, փողովաբանական շարժում ա-ռաջացնելով Յրանսիայում, ցանկանում են արդարանալու յենակէտ ստեղծել այն դէպքում, եթէ խաղաղութիւնը կապելուց յետոյ յար-ձակում տեղի ունենայ Հնդկա-Զինատանի վրա: Սկսված բանակցութիւնները պէտք է ծառայեն պարզելու համար այն հարցը, թէ գործնէութեան ինչ կողմնակ կընդունէ Անգ-լիան այն չէպէտքում, եթէ Յրանսիայի երկու-ներն արդարանան: Հաստատում են, որ իբր թէ Լանսդօուն հաւատացրեց Դէկասէնին, որ Անգլիայի կողմից ձնշում գործ կը գրվի Եսպանիայի վրա պատերազմի առաջն ուռ-նելու համար: Ասում են նոյնպէս, որ անգլ-իական արտաքին գործերի մինիստրութիւնը բալտիկական էսկադրայի Հեռաւոր-Արևելքի ջրերը մտնելուց տեղի ունեցած բոլոր ինցիդէնտ երի հետ ծանօթանալուց յետոյ համոզվի, որ չէգործութիւնը խախտված չէ եղել:

ՎԼԱԴԻԿԱՎԻՍԿԱ, 24 ապրիլի: Տէխնիկական ընկերութեան բաժանմունքում ընկնում էին խնդիրներ ընդհանուր սօցիալական հարցերի մասին: Օտարները, հիմնվելով կանօնադրու-թեան վրա, խօսք էին խնդրում: Նախագահը մերժեց: Բաղմաթիւ հասարակութիւնը, որոնց պաշտպանում էին և անդամները, դժմաստ-բարով կերպով հեռացան դահլիճից: Ներսէս

ընդհատվեց: Ամեն ինչ հանգիստ անցաւ:

ՏՕԿԻՕ (Բերլինի վրայով): Եսսօ կղզու մօտ նկատված է ռուսական պատերազմական նաւ, որ գնում էր դէպի հիւսիս: Եսպանական ի-րաւաբանները այդ կարծիքն են յայտնում, որ հարկաւոր է ըռնել Ֆրանսիական բոլոր ա-ռաքական նաւերը ասիական ջրերում որպէս ընկալանալիս այն բանի համար, որ նա թոյլ տուեց ռուսական էսկադրային Կօլոնիսիայի ծովափի վրա:

Ռուսները այնքան ի տես Մուսոյուրի, Նոկ-կաիօյից դէպի արևմուտք, բաց ծովում, է ես-պօնական առաքատաւոր նաւը և գերի բռնե-ցին կապիտանին, իսկ յետոյ փախան:

ՏՕԿԻՕ: Նոկկաիօի մօտ ռուսները այրած առաքատաւոր նաւի անունն էր «Եսպանա-մարու» 198 տօնով: Հանդիպելով նաւին Նոկկաիօի մօտ, ռուսները հրամայեցին նրա կօմանդային հեռանալ նաւից, իսկ յետոյ, կէ-րօսին ամեղով նրա վրա, երկու անգամ շրապ-նել արձակեցին նրա վրա, որից նաւի վրա հրդեհ սկսվեց: Ռուսները հեռացան, տանելով եսպանական նաւի կապիտանին: Կօմանդայի մնացած մասը հասաւ Նոկկաիօի ափին: Այդ դէպքը շատ վախեցրեց շրջակայից ես-պօնացիներին: Երկու կը կրում, որ ռուսա-կան կրէյսները դուրս եկած լինեն Վլադի-վոստոկից՝ եսպանական նաւազնացութեանը փախ հասցնելու նպատակով:

ՊԱՐԻԶ: Յայտնում են, որ Ելուարդ Թագա-ւորի խօսակցութեան ժամանակ նախագահ Լուրէի, Դէկասէնի և Րուվիէի հետ, որովիլ է գտնել ձիւն, որ կարողանային ընդունել եր-կու պատերազմող կողմերը՝ պատերազ-մը դադարեցնելու նպատակով: Յրանս-սիան, Ռուսաստանի դաշնակիցը, և Անգ-լիան, Եսպանիայի դաշնակիցը, որոշե-ցին ասպարէզ գալ միջնորդելու յարձար վայրկեանին, բայց Ելուարդ Թագաւորը յայ-տնեց, որ Ռուսաստանը չի ընդունի խաղա-ղութիւնը մինչև որ տեղի չունենայ երկու էսկադրաների կռիւը:

ՀՌՕՄ: Ապրիլի 22-ի կօնֆօրէնցիայում վճռված է, ի նկատի ունենալով դէպքերի լը-րութիւնը, որ Կրէտէին հովանաւորող պետու-թիւնները կողորակեն մի քանի պատերազմա-կան նաւեր և ափ կիշցնեն գործեր Կրէտէում: Վերջապէս, ծայրայիղ դէպքում, պետութիւն-ները կը յայտարարեն արքայորդի Դէօրգին զրկված գլխաւոր կօմիսարի իշխանութիւնից: ՀԻՍԻՆԻՅՈՐՍ, 24 ապրիլի: Երէկ ձեպըն-թաց գնացքով ձանապարհ ընկաւ Պետերբուրգ գեներալ-Նահանգապետ իշխան Օրօշնսկի:

ՄՕՍԿՎԱ: Գեներալ-Նահանգապետը կար-գաւրեց փող պահանջող պարագ մարդկանց բանտարկել մինչև հրեք ամիս:

ՊԱՐԻԶ: Գրուիչի-Յէսիւրին գնալու նպատակն է դաշնակցութիւն կապել Սերբիայի հետ և գիշը Զէնթօբրային տասը բաւարէա և 30,000 հրացան: Գրուիչի իւր լուր է Եմէնում: Թիւրքաց զինւորական հրամանատարը միայն մի քանի բաւարիս ունի 70,000 ապստամբ-ներին դէմ: Թիւրքիան օժանդակ գործեր է ուղարկում Ֆրանսիական փոխադրիչ նաւերով: Կօլէյաի հարցը շատ բարդացաւ: Անգլիան ցանկանում է status quo պահպանել 1902 թվա-թիւրբիայի հետ կապած համաձայնութեան կանօններին հիման վրա: Եսպանացիները չա-փաղանց անհանգստացած են Բոժէստվէնսկու էսկադրայի գործողութիւններից, որը գրաւում է նաւեր մթերքների բեռով Եսպանիայի հա-մար:

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐ: Մանուֆակտուրի մասա-զիններ մի քանի տէրեր այսօր, առաջին կի-րակի օրը, դադարեցրին տօնական առևտուրը: Ազատ գործակատարները պահանջեցին մնա-ցած մագաղիների փակումը: Պահանջները կատարվում էին անշուշտ: Ենթադրու օստիկանու-թեան կարգապահութեան և ըռնի միջոցների բացակայութեան, ինցիդէնտները չը կային: Օրը հանգիստ անցաւ: Մագաղիները փակ-ված են:

ՄՕՍԿՎԱ: Անդունականութեան պարագլուխ-ները այսօրվայ մասնաւոր խորհրդակցութեան-ը եկան քանի մասնակցողներ: Բոլոր նիս-տերի արձանագրութիւնը մէկը կը լինի, Կը ընկնի ընտրութիւններին սխտեմի հարցը հօֆ մէյստէր Բուլիզինի յանձնաժողովում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: «Касний» լրագրի խմբագիր-հրատարակիչ Թօփիլեաշվիլին Կովկասի փո-խարարն թոյլատրեց հրատարակել Բագոււմ «Գայաթ» (Կեանք) անունով լրագիր թուր-քերէն լեզուով: «Գայաթ» լրագիրը կը հրա-տարակվի մայիսի երկրորդ կէսից մայրաքա-ղաքների մեծ լրագիրների պօքաբաժով:

25 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ապրիլի 24-ին պաշտօնա-

կան տեղեկութիւններ չեն ստացված Հեռա-ւոր Արևելքից: Սրբազնագոյն Սինօզի կողմից Նորին Մեծութեանը մատուցած շնորհաւորու-թեան անուանակոչութեան առիթով միտրօ-պօլիտ Անտօնի արժանացաւ ստանալու հե-տեալ հեռագիրը. «Մրագին ճնոհակալութիւն եմ յայտնում Սինօզին եւ ձեզ, հովուապետ, ճնո-հաւորութիւնների եւ աղօթարար բարեմաղրու-թիւնների համար: Հաղորդեցիք իմ հոգեկան ե-րախագիտութիւնը սրբազնագոյն միտրօպօլի-թիս Ֆիլիպինին, արհեստիպագու Նիկօլային եւ սրբազն եպիսկոպոս Կիլիկիսին: Այնքանքաւ:—Ապրիլի 24-ին Պետերբուրգ ժամանեց 36-դ զինւորասանի տարական գնացքը Հեռաւոր Արե-ւելքից եկած հեռադիւնելով և վերաւոր զինւորնե-րի բերված են երկու օֆիցէր, մի պաշտօնայ և 261 զինւոր: Զինւորների թիւում գտնվում են 5 անդամահատվածներ, 194 վիրաւորներ և 62 հիւանդներ: 80 զինւորներ ուղարկված են Սիմեոփոկի զինւորական հիւանդանոցը, իսկ մնացածները Նիկօլայիսկի հիւանդանոցը:—Ապրիլի 24-ին հեռանք և վերաւոր զինւորնե-րին պատերազմի բեմից բերելու համար նշա-նակված Օդոսսոփառ գլխաւոր հոգաբար-ձուհի Մեծ Իշխանուհի Մարիա Պաւլօվնայի այցելեց հիւանդներին և վիրաւորներին Սիմեո-նօփոկի զինւորական հիւանդանոցում: Հոգա-բարձուհին պատեց այն սենեակները, ուր տե-ղաւորված էին ապրիլի 22-ին եկած 268 հի-ւանդները և վիրաւորները, իսկ յետոյ այն զինւորներին, որոնք հէնց նոր էին բերված Նիկօլայիսկի կայարանից: Հնթթով հարցու-փորձ անելով բոլորին, Մեծ Իշխանուհին բա-րեհաճեց ողորմաճաւոր խօսակցել հիւանդնե-րի և վիրաւորների հետ, և այդ միջոցին իւ-րաքանչիւրը արժանացաւ ստանալ Նորին Բարձրութեան ձեռքերից մի մի յախճապա-կեայ ձու: Նէփիսեան 137-դ հետեակ գնդի զինւորները, որի ղէֆն է Մեծ Իշխանուհին, ստացան դրամական նպաստ:—Մեծ Իշխա-նուհի Միլիցա Նիկօլայիսկա երեխաներով ապ-րիլի 24-ին ուղևորվեց Կրիմ Դիւրբէր կալուած-ը:—Ապրիլի 24-ին ստատու-սեկրետար Կ. Պ. Պրէֆօնօսեյվ աւարտեց Սրբազնագոյն Սինօ-զի օրէք-պրօկուրօրի պարտաւորութիւնները կատարելու 25-ամիայ յօբելեանը: Յօբելեարը ստացաւ շատ ողջոյններ և շնորհաւորութիւն-ներ:

ՊՐՏՍՄՈՒՏ, 24 ապրիլի: Լամանշի էսկադ-րան հրաման ստացաւ պատրաստվել դիմաւո-րելու սպանիական թագաւորին, որը Անգլիա կը ժամանէ մայիսի 9-ին:

ԵՐԵՎԱՆ, 24 ապրիլի: Գործակալական հե-ռագիրները չեն հրատարակվում: Երէկ Թիֆ-լիսի լրագիրներից ազգաբնակչութիւնն իմա-ցաւ կրօնական համբերողութեան վերաբերեալ ուկապի ըսվանալուութիւնը: Տպաւորութիւնը վերին աստիճանի բերկրալի է: Մանաւանդ մանհրականներին մօտ: Մանհրականներին պատգամաւորութիւնը, որը Պետերբուրգում ներկայացաւ Կովկասի Փոխարքային և ներ-քին գործերի մինիստրին, վերադարձաւ Երևան: Մանհրականները, իմանալով պատգամաւո-րութեան ընդունելութեան մանրամասնու-թիւնները կոմ Վօրօնցօվ-Դաշկօվի և հօֆէյս-տէր Բուլիզինի կողմից, կատարեալ յոյսով նայում էին ապագայի վրա: Բարձրագոյն ու-կազմ ամբարցից նրանց մէջ այն հաւատը, որ Ռուսաստանի մնացած հպատակների հետ նը-րանց իրաւունքները հաւասարեցնելու ցան-կութիւնը կիրաւորվի կարճատե ժամանա-նակում:

ՕԴԵՍՍԱ, 24 ապրիլի: Օդեսայի հանձնա հա-մայնը աղօթատան մէջ կատարեց հանդի-սաւոր մաղթանք առողջութիւն և յաղթութիւն պարգևելու համար ներեցեալ Ինքնակալ Թա-գաւոր Կայսրին: Աղօթքը կատարեց Օդեսայի և բալտեան թիւներինաստօյանցելը: Ներկայ էին գործերի հրամանատարը, քաղաքապետը, քա-ղաքի ներկայացուցիչները և շատ հրաւերված պաշտօնական անձինք: Որոշում կայացաւ մարմարեայ տախտակի վրա փորագրել ապրիլ-ի 17-ի Բարձրագոյն ուկազը:

ՊԱՐԻԶ, 25 ապրիլի: Մինիստրների խոր-հրդի նախագահը պահանջեց արտաքին գործե-րի մինիստրից, որ նա հաղորդէ իր պլանների մանրամասնութիւնները: Դէկասէն խնդրեց սպասել մի քանի օր, գտնելով, որ ցանկալի չը պէտք է համարվի բանակցութիւնների յայ-տարարումը, որոնց գաղտնիքը անհրաժեշտ է Այդպիսով մի քանի օրից յետոյ կը լուծվի այն հարցը՝ թէ արդեօք Դէկասէն կը մնայ իր պաշտօնում կամ հրաժարական կը տայ:—Բա-ղաքական շրջանները պահանջում են պնդել Լօնդօնում և Հոմում, որպէս զի միաբան գործողութիւններով ստիպեն Մէնէլիէին հրա-ժարվել երկաթուղիները միջազգային ձեռ-

նարկութիւն դարձնելու դիտարկութիւնից, այլ թոյլ տալ կառուցումը ֆրանսիական ընկերութեանը:

ԳՈՒՆԶԺՈՒԼԻՆ. Հրամանատարը շարունակել է պատել դիրքերը և աչքի անցնել եկած զորամասերը: Այսօր այդպիսի զորամասերից մէկի զօրատեսն է: Գնդերը ներկայացնում էին կարգով: Հեծելախմբի տեսքը աշխոյժ է և եռանդուն: Ձիերը մէկը միւսից լաւ են: Օֆիցերները խօսք չեն գտնում գովելու կռիւ փափազող զինուորի կազմը: Մեր ձախ թերի վրա նկատեցին խոնարհող աւազակախմբերի երևալը:

ՊՍԻՂԶ: Ասում են, որ եսպոնացիները ըսպառնում են բռնել ֆրանսիական բոլոր նաւերը այն նաւահանգիստներում, որոնք գտնւում են հեռաւոր-Արեւելքի և Յիսթիայի միջև, մինչև որ լիակատար բաւարարութիւն ստանան չեզոքութիւնը խախտելու առթիւ:

ՏԱՄԲՈՎ, 22 ապրիլի: Կայացաւ Տամբովի նահանգի համաժողովը պարագլուխ Իշխան Չորոխանովի նախագահութեամբ, որը մասնաւոր բնաւորութիւն ունէր: Հաւաքվեցին 80 մարդ: Քննվում էր Մոսկվայում գումարված 22 նահանգական ազնուականութեան պարագլուխների յայտնի գրութիւնը: Մեծամասնութիւնը միացաւ գրութեան մէջ յայտնված պահանջներին:

ԼՕՆԴՈՆ: «Մօրնինգ Պօստ» լրագրի թղթակիցները նկատում են, որ վրադիվատուներն էսկադրայի դուրս գալը ցոյց է տալիս, որ վրադիվատուները պաշարելու համար դեռ ևս ոչինչ չեն անում պատրաստութիւններ չեն արված: Պաշարումն սկսելու առաջին գործը կը լինի յարաբերութիւնների ընդհանուր արեւմտեան կողմից, որի ամենափոքր նշանն անգամ չը կայ:

ՊՐՏՏԱՆԻ: Անգլիական երեք ահանանաւեր եկան, իսկ երեք ուրիշ ահանանաւ սպասվում են այսօր, նոյնպէս և «Կոնսուլում» և «Գոդիաթ» պատերազմական նաւերը, որոնք գնում են դէպի Հեռաւոր Արեւելք:

ԿՕՔԷՆՆԱԳԷՆ: Ռուսաց կառավարութիւնը բողոք կուղարկէ Ձինաստանին այն առթիւ, որ եսպոնացիները օգուտ են քաղում խոնարհող աւազակախմբերից ներկայ պատերազմում:

ՏՕԿԻՕ: Եսպոնացի երկրորդ բողոքին ֆրանսիական կառավարութիւնը յայտնեց, որ բաւարարական էսկադրային հրամանագրված է հեռանալ Խոնկոէ ծովածոցից: Կարծում են, որ Ռօժէստովսկիի նոր յինակէտ կընարէ Մօնթայի ծովածոցում, իսկան կղզու հարաւում:

ՏՕԿԻՕ: Նորից կենդանացաւ Յիսթիայի դէմ գրգռումը չեզոքութեան հարցում: Եսպոնական մամուլը եռանդուն գործողութիւններ է պահանջում և առաջարկում է ուղարկել իր թափառող ֆրանսիական նաւահանգիստները: Ռուսական զօրքերը հիւսիսային Կօրէյայում երկու առաջ են բերված իւրաքանչիւր և վրադիվատուներ միջև յարաբերութիւնները ընդհանուր եսպոնացիների փորձերի առաջն առնելու նպատակով: Տուէնի ակունքներում կամուրջներ են շինված, իսկ ձախ ափի վրա պաշտպանողական կառուցումներ:

Խմբագիր՝ ԱԼԷԳՍԱՆԴՐ ԲԱՆԻՔՍԻ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ. ԱՂԱՄԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Գ. Ա. ՀԱՆՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միգրանի և սիֆիլիսի բնական հիւանդութիւնները, ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան 6 ժ.—9 ժ.: Կուկիա, Սեմեոսովսկայա փ. № 20. (Կ. Կ. Կ.) 1—30

Շուտով լոյս կը տեսնի
«ՎԱՐՁՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ և ԴՐԱՄԱԳԼՈՒԹԻՒՆ»
«ՓԵՏՏՈՑՈՒՆԵՐ և ՀՎԱՐՏՈՑՈՒՆԵՐ»
Ժեռօմ. Ժեռօմի
Թարգմանութիւնը ուսուցիչից
Հրատար: Անգրէնի: 1—2

Լոյս տեսաւ ուսուցիչի լիզնով
РАЗСКАЗЫ А. АГАРОНЯНА
с биографическим очерком и портретом автора, в переводе А. Генджиянц, ц. 30 к.: Գումարով անոցներին 30% զիջում. Դիմել՝ Армавирь, Куб. об. Т. д. Анпетковъ, Унановъ и А. Генджиянц. 1—4

Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Կը վերադառնայ արտասահմանից Պատրիարքի մայիսի 10-ին և այդ ժամանակից կը սկսէ իր ընդունելութիւնը: Հասցէն՝ Երկաթուղիների փողոց, ուսաց մայր եկեղեցու յետև, տուն՝ Արխիպովի: (ո. Կ.)

Բժիշկ Ա. Միխրաբեանց

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վնասերական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. Երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն՝ Գուգանովի, դեղատան կից: (ա. օ.) 61—80

Ս. Ս. Մ. Ն. Ա. Բ. Ո. Յ. Ս. Պ. Շերտաքանեանց

Ընդունում է հիւանդներին ամեն օր առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 3—6, Երեանեան հրապարակ, տուն՝ Արդուօթեան, լուսանկար Լալայեանցի բնակարան:

Գուտտներեղ

Գրախնութիւնը վաճառվում են
Գեորգ Միլի-Կարագեօղեանի

- աշխատութիւններն ու հրատարակութիւնները.
1. Գ. Մէլիք-Կարագեօղեան. «Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկա-Հայաստանի համար», 1901 թ., գինն է 35 կ.
 2. Գ. Մէլիք-Կարագեօղեան, «Գերմանիայի հայ ուսանողութիւնը, 1901 թ., 20 կ.
 3. А. Агаронянц. «Бамо», (библиотека армянских писателей № 1) 1903 г. 20 к.
 4. В. М.-ский, Константинопольские увеселения. 1903 г. 20 к.
 5. В. Уманецъ. Современный Багизмъ 1904 г. 50 к.
 6. Յ. Վ. Կարագեօղեան. «Գրիտաֆօր Կարա-Մուրզա, նրա կեանքը և գործունէութիւնը», 1904 թ. 60 կ.
 7. Մարդու կազմութիւնը, կազմից և հրատարակ. Գ. Մէլիք-Կարագեօղեան, 1904 թ. 60 կ.
 8. Счастливыя минуты, вальсъ для фортепiano, соч. Колмановой 50 к.
- Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ», Г. Галустьян. 5—10

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ ՄԱՏԻԿՈՒ

(Capsules au Matico)
ԳՐԻՄՕ ԵՒ ԸՆԿ. ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐԻ
Թոյլ է տրված Ռուսաստանում:



Աջողութեամբ գործ է անվում հոնորէի բժշկութեան ժամանակ, երբեք չը յոգնեցնելով ստամոքսը, ինչպէս այդ լինում է, երբ գործ է անվում Կապարալումը հեղուկ ձևով:

Парижъ, 8, Rue Vivienne և գլխաւոր դեղատներում:
(12 և 19) 20—20

Բացված է
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆԹԵԱՄԲ
Լոյս տեսնող
պատկերազարդ

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՄԻ
XIII և XIV դրբերի
բաժանորդագրութիւնը
Բաժանորդագրեն է 3 ռուբլի:

Լոյս է տեսել XII դրբեր, որ առանձին արժէ 2 ռ. XI դրբի հետ 3 ռ.: Նախորդ բոլոր դրբերը վաճառվում են խմբագրատանը բաժանորդագրական գնով:
Դիմել՝ Ерванду Лалаянцъ, Саперная 5 կամ Семинарія Нерсисянъ, Тифлисъ. (Կ. Կ. Կ.) 6—10

Լոյս տեսաւ
ԻՇԽԱ. ԱԼ. ՍՈՒՄԲԱՏՕՎԻ
„ԴՆԻՍԴՆՈՒԹԻՒՆ“

պիեսը հինգ արարածով
հեղինակի պատկերով եւ յառաջարկով
Թարգմանից
Ա. Մասնիկեան
Գինն է 50 կոպ.

Դիմել՝ Թիֆլիս, «Մուրճի» խմբագրութեան.
«Գուտտներեղ» գրադաճառանոցին և Թարգմանողին՝ Москва, почтамтъ, до востребования. 5—5

Ա. Ն. Ի

ՇԷՆԴ ԿԱՏԿԵՐԱԳԱՐԴ ԴՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
հեղինակութիւն ԼԵՕԻ

Բովանդակութիւն. Ուղևորի տպաւորութիւններ.—Անիի և շրջակայների տեղագրութիւն.—Բազարատեղիների թագաւորութեան սկիզբը և անկումը, ընդարձակ տեսութիւն.—Անիի անցեալը: Ստուար հատոր, զարգարված 100 ից աւել պատկերներով և բազմաթիւ զարդանկարներով ու օրնամաններով, որոնք ընդօրինակված են Անիի քանդակներից: Առանձին՝ Մայր Եկեղեցին, մեծադիր, գունաւոր պատկեր, գործ ճարտարապետ պ. Թորոմանեանի:

Գ Ի Բ Ը Կ Ը տ պ ա զ ր վ ի ա ռ տ ա ս ա մ ա ն ու մ :
Բաժանորդագրեն է 5 ռուբլի:
Կարելի է վճարել և մաս-մաս.—գրվելիս 2 ռուբլի, իսկ մնացած 3 ռուբլին մինչև գրքի լոյս տեսնելը:

Գրվել կարելի է Թիֆլիսում, «Գուտտներեղ» գրադաճառանոցում: Հասցէն. Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ“.

Ե. Ղ. Ա. և Ա. Մ. Լ. Օ. Վ. Ն. Ե. Ի

Առևտրական տան մանրածախսի խանութում

Գոյովներէ պրօս., Կաղէտների կօրպուսի դիմացը,
ԷՃԱՆ ՎԱՃԱՌԻ ԶԱՆԱԶԱՆ

Մ. Ն. Ա. Յ. Ո. Դ. Կ. Տ. Ո. Դ. Ե. Ի

Զաւակի հետեւեալ շաբաթվայ ընթացում:
Ամենայն օր ստացվում են ներկայ սէզօնի համար ապրանքներ
Գ Ի Ե Բ Ն ա ո ա ն ց ս ա կ ա ր կ ու թ ե ա ն
Օտար քաղաքների պ.պ. գնորդների պահանջով կուղարկվեն նմուշներ: Պատուէրները կը կատարվեն արագ և ճշգրէն:
(Կ. Կ. Կ.) 2—3



Պրովիդոր Ա. ՍԱՐԴԻՆԵԱՆՏԻ


Բ. Օ. Ր. Օ. Ն. Ա. Ֆ. Թ. Ա. Լ. Ա. Ն.

Ն ո Ր Ն ի Լ Թ Ը

Կատարելապէս ոչնչացնում է գլխի բեկի, ամացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը: Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրեւ ոչ մի ֆուսսակար նիւթ չը պարունակող:

Պահանջարան Կавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисъ, Баку, Ватумъ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառաներում:

Արժէքն է 1 ռուբլի 25 կօպէկ:
(2. 1 ան.) 42—50



Ս. Պետերբուրգի մեքենայական արդիւնագործութեան ընկերութեան

ԱՄՈՒՐ, ՃԱՇԱԿՈՎ և ԹԵԹԵԻ, ԿԱՆԱՅ, ՏՂԱՄԱՐԴԱՆՑ և ԵՐԵՄԻԱՆՆԵՐԻ

ԿՕՇԻԿՆԵՐ,

նոյնպէս և սկօրօխօղներ ու սանդալներ կարելի է ստանալ Թիֆլիսում և Անդրկովկասի միւս քաղաքներում ԱՄԵՆԱԼԻ վաճառատներում.

Նոյն գրվում է ուղք դարձնել ֆաբրիկայի նշանի վրա:

ՆԵՐՍԻՍԻԱՆԻ ՆԵՑՇԵԼԵՐ
Առևտրական տան պահեստում կայ ընտրութեան համար
մեծ քանակութեամբ ոռուսական եւ արտասահմանական
արդիւնագործութեան
ԿԱԶՈՒԵՂԻՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ
Տէլեֆօն № 346. 81—59 Երեանեան հրապարակի վրա: